# "ՏԻԳՐԱՆԵԱՆ ՍԱՆ"ԵՐՈՒ

## ԲԱՐԵՐԱՐԻՆ ԲԱՑ-ՆԱՄԱԿԸ

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՄԱՐՄՆԻՆ

Պէյրութ հրատարակուող ԱԶԴԱՐԱՐ շաբաթաթերթի Նոյեմբեր 9-ի թիւին մէջ տպագրուած է Մ. Տիգրանեանի բաց-նամակը՝ ուղղուած Հ. Բ. Ը. Միութեան Կեդ. Մարմինին։

Այս գրութիւնը հրատարակելու խնդրանքով ԱԶԴԱՐԱՐի խմբագրութեան յանձնած է նոյն ինքն Մ. Տիգրանեան, որ իր ճամբորդութեան միջոցին հանդիպած է Պէյրութ և այցելած է թերթին խմբագրին։ Մ. Տիգրանեան կարեւոր գումար մը տրամադրած է իր և իր զաւակին կողմէ և հաստատած է Մ. ԵՒ Ա. ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, որով հայ ուսանողներ կը պահուին օտար համալսարաններու մէջ։

*Օգոստոս 7ին կը բաժնուիմ Մ. Նահանգներէն, նպատակ ունենալով անձամբ գալ ծանօթանալու մեր համալսարանական ուսանողներուն հետ, որոնք կ'ուսանին Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ։*

*Նախ փափաքելով Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը տեսնել, հոն մօտէն ծանօթանալու համար թէ՛ կրթ. հաստատութեան և թէ՛ բարձր դասարաններու աշակերտութեան հետ, ընտրելու համար արժանաւոր շրջանաւարտներ՝ իբրև «Տիգրանեան Սան»։ Այցելեցի՝ հաստատութեան։*

*Նիկոսիայէն մեկնումիս առթիւ, Պատ. Տնօրէնութիւնը հրամեցաւ թէյասեղան մը տալու, ուր, խմբանկարին վրայ, վերջին և վերջինթեր դասարաններու աշակերտութիւնն ալ ներկայ գտնուեցաւ, յանձնելու համար իմ և ուսուցչական կազմին խորհուրդները։ Մեր առաջին գլխաւոր նիւթը կը կազմէր Մ. եւ Ա. Կրթական Հիմնադրամի ծրագիրը։*

*Այս թէյասեղանին՝ ուսուցիչներէն մին կարդաց մեր Կրթ. Հիմնադրամի ծրագիրը. ընդունելութեան պայմանները մի առ մի բացատրելով, խրախուսելով ուսանողները, որպէսզի շրջանաւարտ ըլլալէ յետոյ կարենան օգտուիլ այդ Հիմնադրամէն։*

*Այս առթիւ, ուսուցիչներէն մին հարցում մը ուղղեց ինձ, ըսելով. —«Երբ ներգաղթը այսպէս շարունակուի, այս կողմի Հայերը Հայաստան պիտի երթան. հոս պիտի մնայ միայն 50 հազարի մօտ Հայութիւն մը, որ հակահայաստանեան է. այն ատեն ինչ պիտի ըլլայ ձեր Հիմնադրամը»։*

*Նկատեցի հարցումին խորհրդաւոր ըլլալը և պատասխանեցի. —«Այնպէս որ ըսէք. ես չեմ խորհիր թէ գտնուի Հայ մը որ Հայաստանը և Հայութիւնը չսիրէ։ Եթէ երբեք գտնուին սակաւաթիւներ՝ 10—20 հոգի, որոնք խակամիտ ձեր բառերին նման հակահայաստանեան են և Հայաստան չեն սիրեր, այդպիսիները ես կ'ըսեմ ազգատեաց ճայներ։ Բայց գիտցած եղէք, մենք երբեք նկատողութեան չենք առներ ուսանողի մը հաւատամքային-կուսակցական կամ յարանուանական հանգամանքը. մեզի համար միայն ազնիւ և մաքուր զգացումով հայ կարեւոր է»։*

*Այդ միջոցին ուսուցիչ Պ. Գ. Ա., բարկացած աչքերով, բացագանչեց — «Բայց անոնք (ակնարկելով «Դաշնակցականներուն») հակահայաստանեան են և դուք անոնցմէ աշակերտ կ'ընդունիք»։ Այդ ատեն կրկին բացատրեցի թէ՝ մեզի համար ընաւ տարբերութիւն չ'ըներ, մեր մտքերուն մէջ երբեք տեղ չունին կուսակցութիւն կամ յարանուանութիւն, մեզի համար ամէնքը հաւասար են, կ'ուզէ ռամկավար ըլլայ, կ'ուզէ դաշնակ, հնչակ կամ ալ չէզոք, կ'ուզէ լուսաւորչական կամ կաթոլիկ երր ուզէ, պարկեշտ ու ազնիւ զգացումով պատուական Հայ են և մեր պայմանները կը լրացնեն։ Օրինակ՝ մեր ուսանողներէն երկու ընտրած ենք Մելքոնեան կրթարանէն (ռամկավար) և Հայ Ճեմարանէն ալ մէկ հատ՝ որ բողոքական ազնիւ պատանի մըն է։*

*Խօսքս դեռ բերանս էր, երբ Պ. Գ. Ա. (ուսուցիչ) աւելի բարկացած աչքերով գոչեց — «Բայց անոնք (ակնարկելով Հայ Ճեմարանի աշակերտութեան) դաւաճան են, և ահա դուք կը քաջալերէք այդպիսիները»։ Կը պատասխանեմ ակամայ սրտնեղելով — «Անոնք դաւաճան չեն, անոնք ձեր եղբայրներն են. եթէ նոյնիսկ դուք զանոնք հակահայաստանեան, դաւաճան անուանէք, եթէ նոյնիսկ անոնք խայ-*